

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության առողջապահության
նախարարության և Հունաստանի Հանրապետության
առողջապահության և սոցիալական բարեկեցության նախարարության
միջև հանրային առողջապահության ոլորտում 1996-2000 թթ.
համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության առողջապահության
նախարարությունը և Հունաստանի Հանրապետության
առողջապահության և սոցիալական բարեկեցության նախարարությունը,
այսուհետ՝ Պայմանավորվող կողմեր, նպատակ ունենալով խթանել
երկրորդ հարաբերությունները հանրային առողջապահության
բնագավառում, համոզված լինելով, որ համատեղ ջանքերը կաջակցեն
ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող բժշկական խնդիրների
ցանկալի լուծմանը և մեծապես կնպաստեն երկու ժողովուրդների
առողջական վիճակի բարելավմանը,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Պայմանավորվող կողմերը կզարգացնեն ու կծավալեն
համագործակցություն հանրային առողջապահության բնագավառում՝
խթանելով փորձի փոխանակումը երկու կողմերի համար առաջնահերթ
համարվող ոլորտներում:

Հոդված 2

1. Պայմանավորվող կողմերը կկազմակերպեն ուղարկող երկրի
կողմից առաջարկված թեմաներով փորձագետների
պատվիրակությունների աշխատանքային այցելություններ՝ նպատակ
ունենալով փոխադարձաբար ծանոթանալ երկու երկրների
առողջապահության համակարգերին և բարելավել իրենց
առողջապահության և գիտահետազոտական ոլորտների
աշխատողների մասնագիտական ուսուցումը:

2. Պայմանավորվող կողմերը միմյանց կտեղեկացնեն փորձի
փոխանակման նպատակով առաջարկված փորձագետների անունները,
մասնագիտությունները, կոչումները և այլ տվյալներ՝
փոխհամաձայնությամբ որոշված ամսաթվից 30 օր առաջ: Ժամանման

օրվա և երթուղու մասին ուղարկող Կողմը ընդունող Կողմին պետք է տեղեկացնի առնվազն 15 օր առաջ:

Հոդված 3

1. Պայմանավորվող կողմերը կաջակցեն բժշկական գիտահետազոտական հաստատությունների՝ վերջիններիս միջև կնքված անմիջական համաձայնագրերի հիման վրա իրականացող համագործակցությանը:

Վերոհիշյալ համագործակցությունը կիրականացվի գիտական նյութերի, տեխնիկական փաստաթղթերի փոխանակման, ինչպես նաև ընդհանուր աշխատանքային ծրագրերի և մեթոդաբանության վրա հիմնված համատեղ գիտահետազոտական ծրագրերի միջոցով:

Հաստատությունների ղեկավարների կողմից ստորագրված համագործակցության ծրագրերը կիրառելի կդառնան յուրաքանչյուր երկրի իրավասու մարմինների կողմից հաստատվելուց հետո:

2. Պայմանավորվող կողմերը կօժանդակեն հիվանդանոցների միջև անմիջական փոխըմբռնման վրա հիմնված ուղղակի համագործակցությանը:

Հոդված 4

1. Պայմանավորվող կողմերը փոխադարձաբար կնպաստեն բժշկական ամսագրերի, առողջապահական ուսուցողական նյութերի և պլակատների փոխանակմանը:

2. Պայմանավորվող կողմերը միմյանց կտրամադրեն առողջապահական վիճակագրական տվյալներ և համաճարակաբանական հաշվետվություններ վարակիչ հիվանդությունների վերաբերյալ:

3. Պայմանավորվող կողմերը խնդրանքի դեպքում կփոխանակեն տեղեկություններ առողջապահական օրենսդրության մասին և նմանատիպ պաշտոնական փաստաթղթեր:

4. Պայմանավորվող կողմերը կնպաստեն բժշկական հրատարակչությունների միջև համագործակցության զարգացմանը:

Հոդված 5

1. Սուր ախտաբանական վիճակների կամ անհետաձգելի բուժօգնություն պահանջող այլ հիվանդությունների դեպքում որևէ Կողմի տարածքում ժամանակավոր այցելություն կատարող մյուս Կողմի

քաղաքացիներին, ներառյալ դիվանագիտական և հյուպատոսական անձնակազմը, Պայմանավորվող կողմերը փոխադարձաբար կապահովեն անվճար բժշկական օգնությամբ:

2. Պայմանավորվող կողմերը կարող են յուրաքանչյուր դեպքում փոխադարձ համաձայնության հիման վրա ախտորոշման և բուժման նպատակով միմյանց ուղարկել հիվանդներ: Դրա հետ կապված ծախսերը կվճարի ուղարկող Կողմը:

3. Կողմերից մեկի քաղաքացու՝ մյուս Կողմի տարածքում մահվան դեպքում Կողմերը փոխադարձաբար կապահովեն դատաբժշկական ծառայություններ, ներառյալ դիակի զննման կամ պահպանման այլ ձևերը: Դատաբժշկական ծառայությունների, դիակի զննման և տեղափոխման հետ կապված ծախսերը կվճարի մահացածի ընտանիքը:

Հոդված 6

Պայմանավորվող կողմերը կստեղծեն Համակարգող կոմիտե, որը պատասխանատու կլինի սույն Համաձայնագրի դրույթների իրականացման համար, երկու Կողմերի նախարարություններին պարբերաբար կտեղեկացնի սույն համագործակցության ընթացքի և զարգացման մասին:

Համակարգող կոմիտեն անհրաժեշտ քայլեր կձեռնարկի սույն Համաձայնագրի կիրառումը դյուրացնելու ուղղությամբ: Սույն Համաձայնագիրն իրագործելու համար երկու երկրների առողջապահության նախարարությունները պետք է ստորագրեն համագործակցության հաջորդական երկամյա ծրագրեր, որտեղ կձգգրտվեն նաև ֆինանսական պայմանները:

Այդ կոմիտեն Կողմերից յուրաքանչյուրից կներառի երեքական անձ և կղեկավարվի առողջապահության նախարարության բարձրաստիճան ներկայացուցչի կողմից:

Հոդված 7

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ կմտնի այն թվականից, երբ Պայմանավորվող կողմերը դիվանագիտական ուղիներով միմյանց կտեղեկացնեն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար պահանջվող բոլոր ներպետական ընթացակարգերի ավարտի մասին:

Սույն Համաձայնագիրը ուժի մեջ կմնա 5 տարի, որից հետո կարող է ինքնաբերաբար երկարաձգվել ևս 5 տարով, եթե Պայմանավորվող կողմերից որևէ մեկը համապատասխան ժամանակահատվածի

ավարտից առնվազն 6 ամիս առաջ գրավոր չժանուցի Համաձայնագրի դադարեցման մասին:

Սույն հոդվածին համապատասխան սույն Համաձայնագրի գործողության դադարեցման դեպքում նրա շրջանակներում իրականացվող անավարտ մնացած ցանկացած փոխանակման կամ համագործակցության ծրագիր կմնա ուժի մեջ մինչև ավարտը:

Կատարված է Աթենք քաղաքում 1996 թվականի հունիսի 18-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հունարեն, հայերեն և անգլերեն, ընդ որում բոլոր տեքստերը հավասարազոր են:

Մեկնաբանման ժամանակ առաջացած տարաձայնության դեպքում նախապատվությունը կտրվի անգլերեն տեքստին:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 1999 թվականի սեպտեմբերի 7-ից: